

Պ Ա Լ Ա Ր Ա Խ Տ Ը

Ե Կ

Ժ Ա Ռ Ա Շ Վ Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն

Շատ վաղուց յայտնի է պալարախտի^(*) ժառանգականութիւնը. բոլորն էլ տեսնում էին, ինչպէս պալարախտաւար ծնողներն ունենում են պալարախտով հիւանդ ժառանգներ:

Չնայած այս գիտողութիւններին, բայց և այնպէս մինչեւ օրս էլ գիտութիւնը դեռ չի պարզել՝ ժառանգական է արդեօք պալարախտը, մինչեւ օրս էլ դեռ յայտնի չէ՝ անցնում է պալարախտը ժառանգարարութիւնը.

Եւ դա շատ հասկանալի է, որովհետեւ մինչեւ այժմ գիտական-ներից և ուսումնասիրողներից ոչ ոք չի գտել պալարախտի ցու-պիկը սեռական բջիջների մէջ. քանի որ բնդմնաւորման սեռական բջիջների մէջ գտնուած չեն պալարախտի ցուպիկները, ապա ուրեմն պալարախտի ժառանգարարը անցնելու մասին խօսք լինել չի կարող:

Բայց այս դրութիւնն ամեննեւին չի ժիմում պաղի, զաւակի միջարգանդային վարակումը: Արգանդի մէջ զարգացող պտուղը, զաւակը, միշտ էլ ենթակայ է վարակման իր հիւանդ մօրից:

Զաւակը ծնուռում է հիւանդ՝ պալարախտով, նա դեռ չձնուած՝ հիւանդ է պալարախտով. այս հիւանդութիւնը բնածին է, զաւակը ստացել է մօրից, ուստի կարող է կոչւիլ և ժառանգական:

Հիւանդ ծնողից ստացած հիւանդութիւնը ժառանգական հիւան-դութիւն է, լինի նա ստացած արգանդի մէջ զաւակի զարգացման միջոցին, թէ անցած սեռական բջիջների միջոցով:

Պարզ ասած պալարախտի կլինիկան է ցոյց տալիս, որ երեխանները տկարանում են պալարախտով շատ վաղ հասակում. եթէ ընդունւած չէ միջարգանդային վարակումը պալարախտով, բայց և այնպէս պէտք է ընդունիլ երեխայի վարակումը ծծկեր հասակում, դարձեալ իր մօրից այնպէս որ այս գէպքում եւս նշանակութիւն ունի, պալարախտի տարածման հարցում, ծծկեր երեխայի մայրը — ծնողը, ապա ուրեմն և ժառանգականութիւնը:

Այսպէս թէ այնպէս պալարախտի տարածումը երեխանների մէջ կախում ունի ծնողից, ուրեմն պալարախտի տարածման մէջ մեծ դեր ունի ժառանգականութիւնը:

(*) Պալարախտ կամ ուռականութիւն կամ տիւպերկիւլօզ, այս անուններուն տակ նաև չցուած է այն ընդհանուր իիւանդութիւնը, որ կերպոնանալով զանազան գործարաններուն վրայ, յառաջ կը բերէ ուկորներու տիւպերկիւլօզ (բէմիք վէրէմի), աղիիներու տիւպերկիւլօզ (պաղըսաց վէրէմի), եւն. եւ մասնաւանդ թոքերու տիւպերկիւլօզ, այսինքն նոցախտ:

ելնելով այս հաւատաքից, մենք պէտք է ընդունենք, որ պալարախտի գէմ պայքարի համար մնե նշանակութիւն ունի մայրը — ազա ուրիմ մեր ամբողջ ուշադրութիւնը պէտք է դարձնենք ծնողի վրայ, որովհետեւ միայն առողջ կանայք են ծնում առողջ երեխաներ:

Ահա այստեղ է, որ նշանակութիւն ունի աղջիկների դաստիարակութիւնն ընդհանրապէս և նրանց Փիզիքական դաստիարակութիւնը մասնաւորապէս:

Այս խնդրին մէջ կարեւոր տեղ է գրաւում և աղջիկների կրկնակի հստագուտութիւնները, որպէս զի ժամանակին արտաքրուին պալարախտով բռնածներին. այդ տեսակ անձանց ենթարկել տիսպանութիւն (բռնադրան) հսկողութեանը, որ ժամանակին բնախեղդ անւի հիւանդութիւնը. մեկուսացնել այն անձանց որոնց հիւանդութիւնը զործոն ընթացք ունի, գնել նրանց սոցիալական այնպիսի պայմանների մէջ, որ նրանց հիւանդութիւնը կանգ առնի և չզարգանա, հսկել, որ հիւանդները չամուսնանան եւ հիւանդ ժառանգներ չծնին:

Պալարախտի գէմ պայքարելիս պէտք է միշտ նկատի ունենալ ժառանգականութիւնը և ուղղել ուշադրութիւնը գէպի այդ կողմը, ձեռնարկելով միջոցներ փրկելու հիւանդութեան ճիրաններից ժառանգներին և այդպիսով կասեցնել պալարախտի տարածումը:

Ե Ր Ե Լ Ա Ն

ԲԺ. Ա. ՄԵԼԻՔԻՔԵԱՆ

Առողջապահութեան ժողովրդական Կոմիտարիատի
Սանհիտարական Լուսաւորութեան Ենթարամնի Վարիչ

Ն Ա Ր Ի Ն Զ Ի Մ Ա Ս Ի Ն

ԷՇ ՄԸ ԱՄՄԻՐՏՈՎԱԼԱԲԻ «ԱՆԴԻՏԱՅ ԱՆՊԼԻՑ» ԳՐԱՒՆ (1478-1482)*

Լաւն այն է որ գունն խիստ գեղին լինի և կեղեւն տաք և չոր է, և նուրբ. զնով քամեսատան (յօդացու) հանէ. և հուն ի յըղեղն ելանէ. և զմաւրուքն (մօրուք) շուտ բերէ, յորժամ զկեղեւն յերեսն աւծես (օծես). և ձէթն աւգոտէ (օգոտէ) ըսահային (գող), և ակապյին հովցաւերուն. և թէ թթուն՝ որ միս է՝ աւգոտէ տաք խափաղանին (սրտի բարախտում). և իր թթու ջուրն զսաֆրան կտրէ. և զփսիսելն այլ. և զստամոքսն կու լուանայ, և կերակուր ուտել կուտայ, զճիճին և զաւձն (օձ) կու հանէ, և ոսկրացաւին աւգոտէ և կեղեւին ձէթն աւգոտէ իր խէժով. զհերքունն (ցատկատուք, լորելից) տանի. և ի կտէն կէս մթխալ (տուր). բայց ջղերուն և կրծոցն զեն կառնէ. զիր չարութիւնն տանի մեղրն և աելպրաւն (արմաւ). Եւ իր փոխանն թուրինջն է: Ասէ Պա, թէ իր կեղեւն տաք Բ տարածան, և իր թթու ջուրն հով

(*) «Անդիտայ Անպլից» կամ «Բառարան թժկական նիւթոյ» գրուած 1478-1482 Ամիրթովալաթ Ամասիացի կողմէ: Հրատ. Կ. Յ. Բասմաչեանի, Վիէնա, 1927: